**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ**

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

26 հունիսի 2019թ. թիվ 260

ՎԱԶԳԵՆ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 223 հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի, ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պաշտոնակատար Ռ.Հարությունյանի զեկուցագիրը և հաշվի առնելով Վ.Ղուկասյանի բացատրագիրը՝

Կ ա ր գ ա դ ր ու մ եմ.

1. Ուսումնական հաստատության կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունները ոչ պատշաճ կատարելու համար «ՀՀ Լոռու մարզի Գեղասարի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Վազգեն Ղուկասյանի նկատմամբ կիրառել «նկատողություն» կարգապահական տույժը:

2" «ՀՀ Լոռու մարզի Գեղասարի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Վ.Ղուկասյանին՝

10-օրյա ժամկետում վերացնել հայտնաբերված խախտումներն ու թերությունները և արդյունքների մասին տեղեկացնել:

3. Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պաշտոնակատարին՝

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով սույն վարչական ակտը եռօրյա ժամկետում հանձնել հասցեատիրոջը՝ ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Invalid signature

X

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ